ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԻ ԾՆՆԴՅԱՆ 125-ԱՄՅԱԿԻՆ

1965 թ. դեկտեմբերի 28-ին կայացավ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական նստաշրջանը՝ նվիրված հայ մշակույթի ականավոր գործիչ Գարեգին Սրվանձտյանցի ծննդյան 125-ամյակին։

Ներածական խոսքով նստաշրջանը բացեց Հայկական ՍՍՌ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի դիրեկտոր, դոկտոր-պրոֆեսոր Բ. Առաքելյանը։ Նա բնութագրեց խոշոր բանագետի, ազգագրագետի, մանկավարժի, հասարակական-քաղաքական գործչի բազմաբնույն գործունեությունը, ընդգծելով նրա գերը հայ ժողովրդի հոգևոր մշակույթի ուսումնասիրության գործում։

Գ. Սրվանձտյանցի կյանքի և բանագիտական գործունեության մասին զեկուցեց Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Ա. Տ. Ղանալանյանը։

Գ. Սրվանձտյանցը ծնվել է 1840 թ. դեկտեմբերի 12-ին Վանի Այգեստան թաղամասում։ Տեղական վարժարանն ավարտելուց հետո, նա մեկնում է Վարագ և ընդունվում տեղի ժառանգավորաց դպրոցը, որի ղեկավարն էր Մկրտիչ Խրիմյանը։

Գ. Սրվանձտյանցը իր առաջին գրական քայլերն սկսել է 19-րդ դարի 60-ական թվականների սկզբին, տպագրելով իր աշակերտական ոտանավորները և հայրենասիրական հոդվածները «Արծվի Վասպուրականում» ամսաթերթի էջերում։ Վարագա դպրոցն ավարտելուց հետո Մ. Խրիմյանի կողմից կարգվում է նույն դպրոցի ուսուցիչ և «Արծվի Վասպուրական» թերթի փոխխմբագիր։ Այդ շրջանում նա սկսում է աշխատակցել Պոլսի, Իզմիրի, Թիֆլիսի մի շարք պարբերականներին, ուր տպագրվում են նրա պաշտոնական ուղևորությունների ժամանակ գրի առած զրույցները, երգերը, ասացվածքները, առակները և այլն։

Ժողովրդի կյանքին ու կենցաղին մոտիկից ծանոթանալու համար Սրվանձտյանցը Մ. Խրիմյանի հետ շրջագայության է դուրս գալիս Արևմտյան և Արևելյան Հայաստանի զանազան գավառները իբրև նվիրակ ու քարոզիչ։ Վերադառնալով Մուշ, նրանք իրենց հավաքած նվիրատվություններով դպրոց են բացում Ս. Կարապետի վանքում և հիմնում «Արծվիկ Տարոնոյ» պարբերաթերթը։ 1864 թ. նա ձեռնադրվում է վարդապետ և ուղարկվում Վան իբրև քարոզիչ։

1868 թ. Սրվանձտյանցը նշանակվում է Կարնո ուսումնարանների լիազոր-տեսուչ։ Մեծ կարևորություն տալով մայրենի լեզվի ուսուցմանը, Գ. Սրվանձտյանցը կազմում և հրատարակում է դասագիրք-ընթերցարաններ, որոնք արժանանում են բարձր գնահատականի։ 1892 թ. դեկտեմբերի 12-ին, 52 տարեկան հասակում, Գ. Սրվանձտյանցը վախճանվում է։

Բացառիկ է եղել Սրվանձտյանցի կատարած դերը հայ բանահյուսության բնագավառում։ Նրա անվան հետ է կապված մեր ազգային-ժողովրդական մեծ վեպի՝ «Մասնա ծռերի» («Սասունցի Դավիթ») հայտնաբերման փաստը։ Նրա թողած ժառանգության մեջ կարևոր տեղ են գրավում ուղեգրական և հնախոսական երկերը։ Առանձնապես արժեքավոր է «Թորոս աղբար» ուղեգրական աշխատությունը։ Նրա գլուխ գործոցներից են «Գրոց ու բրոց», «Մանանա» և «Համով-հոտով» բանահյուսական ժողովածուները։ Հիշարժան են նրա երկու տասնյակից ավելի ժողովրդական հեքիաթները և ժողովրդական ավանդությունները, ցրված տարբեր ժողովածուներում։

XIX դարի սկզբին ծնունդ առած հայագիտությունը ընդգրկում է նորանոր մարզեր։ Ասպարեզ են գալիս մասնագետ բանահավաքներ, բանագիտությունը հետզհետե ձևավորվում է իբրև հետազոտության ինքնուրույն բնագավառ։ Գարեգին Սրվանձտյանցը հանդիսացավ հայ բանագիտության հիմնադիրներից մեկը։ Պատմական գիտությունների թեկնածու Վ. Հ. Բդոյանի զեկուցումը նվիրված էր Գ. Սրվանձտյանցի ազգագրական գործունեության բնութագրմանը։

Գ. Սրվանձտյանցն իր ուղևորությունների ընթացքում մոտիկից ծանոթանում է գեղջկական կենցաղին ու սովորույթներին, առտնին կյանքին ու ձգտումներին. դեռևս 1860 թ. ճանապարհորդելով Անդրկովկասի և Պարսկահայքի գավառներում, գրում ու հրատարակում է «Երևան քաղաք», «Տփխիս քաղաք», «Սյունյաց աշխարհ և Շուշի քաղաք» հոդվածները, ուր ակնարկների ձևով ներկայացված է հայ, վրացի և այլ ժողովուրդների ազգագրական պատկերը։

Գ. Սրվանձտյանցն իր հրատարակած ժողովածուներով գիտական հողի վրա գրեց ազգագրական և բանահյուսական նյութերի գրառման գործը։ Եթե Խ. Աբովյանը, Պ. Պռոշյանը, Ռաֆֆին և ուրիշները ազգագրական նյութերը ծառայեցրել են գեղագիտությանը, ապա Գ. Սրվանձտյանցը գեղագիտությունն է ծառայեցրել ազգագրությանը։

Բազմաթիվ ու բազմազան են Գ. Սրվանձտյանցի հավաքած և հրատարակած ազգագրական նյութերը, որոնք ցրված են «Գրոց ու բրոցը», «Մանանան», «Թորոս աղբարը» և «Համով-հոտով» ժողովածուների մեջ։ Դժբախտաբար, մեզ հասել է Գ. Սրվանձտյանցի հավաքած ազգագրական նյութերի մի մասը միայն։ Ժամանակի քաղաքական հանգամանքների բերումով այդ նյութերը մասամբ անհետ կորստի են մատնվել, իսկ մնացածները կրակին են հանձնվել Գ. Սրվանձտյանցի ողջ արխիվի ու գրադարանի հետ միասին։ Իր ժամանակին հայ մտավորականներ՝ Ղ. Ալիշանը, Մ. Էմինը, Գ. Խալաթյանցը և այլոք ըստ արժանվույն գնահատել են Գ. Սրվանձտյանցի ծառայությունները։ Այսօր էլ հայ ժողովրդի մշակույթի երախտավորների շարքում իր պատշաճ տեղն է գրավում Գ. Սրվանձտյանցը։ Նա առաջիններից մեկն էր, որ արձագանքեց ժամանակի հրատապ պահանջին՝ մեղվաջան հավաքեց և ամենքին ի ցույց դրեց հայ ժողովրդի հոգևոր գանձերը, դրանք փրկելով հետագա կորստից, վերստին վերադարձնելով ժողովրդին։

Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ